


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
Ի ԱՆՆԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆՆԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ճառաք օրերը : Ծա-
նոցման տողը 10 Սանդիմ : Երկու ք/ւ ա-
ռաջ հրատարակուած քերթը 40 Սանդիմ :
2 հրատարակուած գումարիւնը ետ չտրուիր :

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ ՏԻՎԻՆՆԵՐԸ ԵՒ ԵՂԵՂԵՑԻՆ

Ատեն մը Կ. Պոլսոյ հայաթերթերուն
մէջ կը քննադատուէին կարգ մը մանկա-
մարդ կիներ՝ որոնք Ղալաթիոյ Ս. Լուսաւո-
րիչ եկեղեցւոյ մէջ հովահարը ձեռքերնին
չորս Կին դիտելով ծիծաղկոտ դէմքով ու
նազեքայլ ուսուցիչներով կը յառաջանային
մինչև դասը, և յետոյ նոյն շարժումներով
եւ կը դառնային . պատճառ . որովհետեւ
հրապուրել կ'ուզէին . . . :

Որո՞ւ մտքէն կ'անցնէր թե վառնալ
պիտի ունենայ եղբւր այդ կարգի . . ուհի-
ներ, որոնք մտադրած ըլլան մրցիլ Պոլսեցի
սեռահիգններուն : Անցած շաբաթ իրիկուն,
(Ս. Լուսաւորչի տօնին) տեղւոյս Ս. Եկեղե-
ցիին մէջ՝ արարողութեան ժամանակ, Եւայի
դասակարգէն կատարեալ պշտուհի մը՝ սըն-
դուեայ շրջազգեստին քղանցքը երկու մատ-
ներովը վերցուցած, հրապուրիչ քաղաքով
մը (կոտորուելով) ձեղքից ժողովուրդը և
յառաջացաւ մինչև դասը, ուր կանգ առաւ
սեղանին առջև ճիշդ քարտիչ հայր սուրբին

դիմացը, և Լուսաւորչի պատկերին առջև
ձեռքին մօմը վառելէն ետքը նոյն հրապու-
րիչ քաղաքով եւս դարձաւ :

Դարձեալ նոյն իրիկունը երիտասարդ
կին մը, վարի վերնատունին մէջ, իր քովը
գտնուող պառաւ կնկան կը հրամայէր ա-
թոռ մը բերել որպէս զի ոտքի վրայ ան-
հանգիստ չըլլայ, կամ լաւ ևս է ըսել կա-
նանց ուշադրութիւնը իր վրայ հրաւիրէ :
Խեղճ պառաւը, որ մայրը կամ թերեւ կես-
ուրն էր, քանի մը անգամ դուրս ելաւ ժամ-
կոչը փնտուց աթոռ մը ուղղելու համար . բայց
ժամկոչ աղբարը մէջտեղ չի կար, տեղ մը
ղրկուած էր պաշտօնով : Փափկասուն տիկինը
դարձեալ պնդեց թէ անպատճառ աթոռ կ'ու-
զէ . ծերունկը ճարահատեալ բակը ելաւ ժամ-
կոչին սպասեց որ քանի վայրկեան ետքը վե-
րադարձաւ . տասը վայրկեանէն տիկինը ա-
թոռին վրայ բաղմած էր, ամէն դք զինքը
կը պիտէր, որ հալտ գոհունակութեան ժը-
պիտ մը կը ցուցնէր շրթունքներուն վրայ :
Տոնամակայ աղջիկ մ'ալ նախանձելով նոյն
տիկնոջ վրայ՝ ըսաւ մօրը . « Բա մայրիկ, յոգ-
նեցայ, աթոռ մը բեր ինծի » :

Ուրիշ անգամ մ'ալ քսանամեայ երի-
տասարդ մը Ս. Պատարագի ժամանակ, Եկե-

դեցւոյ գաւթին մէջ օրիորդի մը հետ կը սիրաբանէր . . .

Եկեղեցին սուրբ է, նուիրական է, պարտաւոր ենք յարգել զայն, այսպիսի արարքներ մինչեւ իսկ հաճի Բանաբոյի պարտեզին մէջ գտնուած ատեննիս գործելէ ըզգուշանալու ենք, զի մեզի համար պատուաբեր չէ: Տեղի չի տանք որ օտարները ծածաղին մեր վրայ: 0.

ՍՏՈՐՆՈՒԹԻՒՆ

Ասկէց մէկ ամիսի չափ առաջ՝ Եկեղեցւոյ բեմէն՝ մասնաւոր վարժարանի մը բողոքական տնօրէնին շուն, գալան, ահմէտ, վատ և այլ ածականներ տալով՝ ծնողքները՝ զաւկներնին փոխանակ այդ մարդուն յանձնելու տանել ծովը նետել համոզող շրտորհունակ քարոզիչ մը երկու օր առաջ նոյն տնօրէնին այցելութիւն մը կուտայ:

Տնօրէնը անոր կըսէ. — Թէեւ զիս եկեղեցւոյ բեմէն անիրաւաբար ձաղկեցիք ու նախատեսցիք, բայց մենք անյիշատար ենք, կը ներենք Ձեզի:

Վերոյիշեալ գաղափարը հրապարակաւ յայտնողի մը անպատեհ էր նոյն անձին այցելութիւն տալը, ինչ պաշտօնաւոր որ կ'ուզէ ըլլայ, գէթ իրեն եկեղեցական արժանապատուութեան արատ չի բերելու համար:

Նրբամիտ կենցաղագէտ մը ըլլալ հարկ չի կայ այսչափ տարրական իրողութեան մը իրազէկ ըլլալու:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— 0 —

... Խմբագիր Տէր .

Յանուն անկողմնակալութեան հաճեցէք հրատարակել հետեւեալը:

Ը. Տեար Յ. Չաքըրեան .

Մի քանի ժամանակէ ի վեր առիթ կուենամ Ձեր կատակի թիւերն ընթերցող,

բայց նորա բովանդակութիւն մկրտուած անւանը հակասականն է, վասն զի կատակ վերնագրին անմիջապէս կը յաջորդեն թերթին սկիզբն զետեղուած գուցէ իբր լուրջ խորմաբարականներ, լեռան մարդի յօգուածներն. Ձեր ստորագրով:

Չանոնք կարգացող ամեն ոք կը նշմարէ որ գուք ձեր սրտին խորը վէրք մ'ունիք թէ ինչո՞ւ Հայ ազգը մոռցեր է զՉեղ այսօր իբր լուրջ գործիչ յարգելու:

Բայց հաւատալով Ձեր տարիքի բերմամբ փորձառութեանը, կարծեմ գիտէք որ ազգը անշուշտ խիստ բօնթլօյի տակ չկրնար առնել բոլոր գործիչների ցանկը. ուրեմն մարդս ամէն վայրկեանին սխալական ըլլալով, գուցէ կերպով իւր ձեր անցեալ գործունէութիւնն, որով կը պարծենաք կատակի էջերումը խոշոր ածականներով, մոռացութեան վճուճը գլտորած ըլնի:

Եթէ Ձեր նպատակն է ազգին հասկացնել թէ գուք ալ հին գործիչ մ'էք և վարձատրութեան արժանի, մի՛ ջանաք հռչակել ինքղիքնիդ հին գործիչ, նկարելով կատակի վերայ Զեյթունի և շրջակայիցը դիքն և այլն, ըսելով թէ միայն Չաքըրեան մըն է որ ծանօթ է այդ տեղերի նոյն իսկ ամենափոքր կէտերուն, վար զարնելով վերջին ծայր անվայել շարադրութիւններով այս կամ այն կուսակցական մարմիններն, իրենց երեսին զարնելով երիտասարդական խակութիւնն և այլն. մտաբերեցէք մէյ մը որ՝ ինչպէս կատակում անցեալները պատմեցիք, ձեր հասակն էլ նրանցից ոչ նուազ անփորձ է եղել յորում ձեր գործած քաջութիւններն, որոնցմով առաւել կը պարծենաք աւելի վերջիններէն շատ յարգի և օգտաւետ եղած են:

Եթէ այդ վերքը ձեր սրտին մէջ հիննալով ու մը ծնած է դէպ ի ազգը՝ մի՛ վար զարնէք օրուայ կուսակցական մարմինները:

Բայց դուք մատնացոյց կանէք մի քանի վատերին ազգապնաս գործերն, որք այդ կուսակցական անուններ դիմակ առած շահամոլութիւններ անելով ազգային գործիչները շատ պղտորեցին, բայց չէք յիշեր հայազգի

անցելոյն պատմութիւնն թէ Հայն ինչպէս ծներ է Վարդաններ նոյնպէս ունեցեր է և Վասակներ . հետեալար ինչպէս Վարդանայ՝ նոյնպէս և Վասակայ արիւնէն խառնուրդ ունինք մենք :

Ուրեմն չուզելով երկարել խօսքս՝ կըսեմ . եթէ ձեր նպատակն է յիշեցնել ազգին թէ դուք ալ Չեր կեանքի անցեալը ազգային Ս. նպատակին համար էք զոհած, պէտք է զայն լրջութեամբ ըսէք , Տէրու նախն գիրքն իսկ կը կրկնէ «պէտք է արդեամբք այլ ոչ բանիւք »:

Անարգանք ու նախատինք տեղալը լուրջ մարդու գործ չէ :

ԱՆՓ—ԱՍԼԱՆ

Հարց—Պատասխանի

—o—

Ի՞նչ է կեանքը առանց աշխատութեան .

— Ծովին վրայ շիւղ մը՝ որ կը տարուբերի առանց նպատակի :

Կատարեալ մայր մը ի՞նչպէս կը ճանչցուի .

— Դիտէ զաւակները :

Դրամն ի՞նչ բանի հարկաւոր է .

— Մինչեւ իսկ Աստուծոյ մօտենալու համար :

Ի՞նչ է ողորմութիւնը .

— Մարդուս Աստուծոյ նմանելու միջոցը :

Ի՞նչ է նորելուկ ազնուականը .

— Զօրին հարցուցին թէ հայրն ո՞վ էր . «Չին մօրեղբայրս է . » պատասխանեց :

Աղուէսը ե՞րբ կը հսկէ .

— Երբ հաւը կը ննջէ :

Աղջիկները ինչո՞ւ համար պատուհանները շատ կեկլին .

— Թռչուն բռնելու համար :

Մարդ մը ի՞նչ պէտք է ընել աղէկ համբաւ առնելու համար .

— Մեռնելու է :

Թարգմ.

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Փիլիպոս աղա, սա պարտքդ ե՞րբ պիտի վճարես , քեզի փոխ փարայ տուինք տէյի մեղաց տէ՞ր եղանք :

— Բաթըւտըդ ի՞նչ է աղբար , քիչ մի քաղաքավար եղիր , չե՞ս խանիր .

— Ինչո՞ւ պիտի խանիր , ստակս կ'ուզեմ՝ կոր , ամօ՞թ է :

— Ստակդ ուզէ՛ բայց քաղաքավար կերպով . ես քեզնէ այս ստակը ուզած ատենս որչա՞փ աղաչեցի պաղատեցայ , անիկայ միտքդ բե՛ր :

—o—

Միւսիւ տօքթօր , մատամիս համար ծով մտնալ պատուիրեցիր , սակայն օգուտ մը չի տեսնար կոր .

— Ինչո՞ւ , անհանդուրժիւն մը կը զգայ .

— Ո՛չ , ո՛չ .

— Ուրեմն . . .

— Ծով մտնալու համար հանուելուն պէս , կը զայիֆնա կոր :

— Անանկ է նէ՛ թող չի հանուած ծով մտնայ :


—

Զապէլ , կըսէր պարոն մը իր սիրուհւոյն թէ որ ուրիշի մը հետ ամուսնանաս՝ անձնասպան պիտի ըլլամ .

— Ոհ , Զենոբիկա , քու սիրոյդ այս անտարակուսելի փորձը տուած վայրկեանէդ՝ զիս իրապէս սիրած ըլլալուդ պիտի հաւատամ :

ԶԵՆՈՅՑ

Առ Տեար Պ. Գ. — Կը խնդրենք որ բաժանորդագիտները գանձելով՝ ընդ հուպ ուղարկէք մեզ :



ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊՏՈՅՏ ՄԸ

Վերջապէս Նաղիբ հանրմը անցած շաբաթ գիշեր ըրաւ չըրաւ համոզեց իր ամուսինը Աստիկ աղան՝ հաճի Բանագոյի զբօսարանին շուրջը պտոյտի մը ելլելու, սա պայմանաւ որ՝ եթէ յոգնէին՝ զբօսարանը չի պիտի մտնէին նստելու, այլ՝ անշուք տեղ մը գետնին վրայ պիտի բազմէին, որովհետեւ քարափը աշխատող և օրական 2 ֆրանք առնող մեր Աստիկ աղային պիւտճէն չէր ներեր իրեն, կնոջը, պալտըզին, զոքանչին ու երկու աղջիկներուն համար առնուազն ֆրանք մը խարճել զբօսարանին մէջ:

Ուստի ճաշերնին ընելէ ետքը ճաշայ եղան: Ինչ երկու ժամ պտտելէ ետքը՝ որոշեցին Բանագոյի քովի փողոցին գլուխը կեցող շրջուն խանութպաններուն ետեօքը նրստիլ գետնին վրայ, ուր ուրիշներ ալ նրստած էին:

Աստիկ աղան սիկար մը շինելէ ետքը մէյ մէկ հատ ալ կնոջն ու զոքանչին հըրամցուց:

— Աստիկ աղա, քեզի բան մը պիտի ըսեմ ամա՛ խըրպանմիշ չպիտի ըլլաս, ըսաւ կամաց մը Նաղիբ հանրմը, սիկարը անոր սիկարէն վառելով:

— Ի՞նչ պիտի ըսես:

— Նայէ՛, մենք քու խօսքդ չի կոտրեցինք, կազինոն երթանք նստինք չըսինք:

— Ըսէիք նէ ի՞նչ ֆայտա կընէր, տունն իբէն ինտո՞ր իսալլ ըրինք:

— Հա, ըրինք ամա՛ ես ան ըսել չեմ ուզեր կոր:

— Ի՞նչ ըսել կուզես կոր:

— Քա մայրիկ, հոս չի նստինք, ելլանք:

— Ինչո՞ւ. ասկէ աղէկ տեղ ո՞ւր պիտի գտնանք. ալա ֆրանկա չալըն մօտերնիս, Սօֆիկին ալա թուրքա թախըմն ալ գիմացնիս...

— Աղէկ ամա՛ բիրէներն ալ պաշլույցին անիծել խէրերնիս:

— Էրկու աշվընէն քեօռնա, հոգի, հոս պիլէ ըռահաթուլին չի կայ ատոնց ծառքէն:

— Սըխը սըխըյա՛ հապուած ըլլալու շունչանորդիները չեմ կրնար կոր բռնել:

— Ինչ մայրիկէն աղէկը չի կայ, չըբը չըբը կը բռնէ՛ բապուճին թէրս թարափին վրայ ալ կը կոտրէ կոր:

— Հապա ի՞նչ պիտի ընէի:

— Կտոր մը տա հա նստինք տէ կելլանք:

— Հասկցա՞ր Աստիկ աղա, հիմա դուն գիտես ամա՛ էյէր մեկ կազինոն տանէիր նէ քիչէն քիչ ֆրանքէ մը պիտի ելլայիր:

— Առաջուընէ ըսինք ձեզի քի կուտաւդ տեղը պիտի նստինք:

— Հա, գիտեմ կոր. մենք ալ անանկ ըրինք ամա՛ նայէ՛, մօտերնիս նստողները բան մը առեր կուտեն կոր:

— Էյ ի՞նչ ընեմ:

— Պարէ սանկ 40 փարայի խապախի կուտ առնեսնէ՛. ամա կէնէ դուն գիտես:

— Ճանրմ կնիկ, ագ ալ ուտուելիք բան է, մարդ միտէ ֆէստիկ կը հանդպի:

— Չէ նէ ամէրիգան ֆըստըսի առնես:

— Ատ ալ չալը թախուլի պէս բան մը:

— Նայէ, վատծուն փարա կը պողայ կոր, օխա մը զէրտալի օլուն ա՛ռ:

— Աս իրիկուն առեր էի, չի կերա՞ք:

— Հա ամա՛ տունը պաշխա՛ հոս պաշխա՛

— Ատ ի՞նչ պօշ լախըտը է. հէմ քեզի բան մը ըսեմ, կամաց կամաց «կուգեմ» ասի մախամը կը շտկես կոր:

— Վոյ չէ, աման բերանդ մի՛ բանար, 40 տարին հեղ մը ես ալ բան մը ուզած ըլլայի. աղէկ որ շատ բան մը չէր:

— Ինչո՞ւ ատանկ քեննայի կըսես, կնիկ:

— քա ճանրմ, հետերնիս ճա հիլներ
կան, հախուռն բերնին երերալը տեսնելէն՝ ի-
րենց ալ մէտէն կուզէ. էյլէն՝ մը օլսուն...

Ջոբանչը (ծաղրելով) — Նա'պիք, ի՞նչ
պօշ տեղը սիրտ կը հատցունես կոր, իշթէ բէք
աղւոր էյլէնմիշ կը լանք կոր. չալններուն ծա-
նովը բիրէ կը քթուենք կոր, տա հա ի՞նչ
կուզենք:

— Օ՛, դուն ալ պաշլայեցիր, թամամ,
կուզէք նէ՛ ամենքդ ալ ըսէք, գիտցածէս
անդին չեմ երթար. հէմ, տունն իջէն ին-
ծի բան մը չենք ուզեր, բիշ մը հով առնե-
լու համար մեղի դուրս հանէ, չըսիք:

— Ծուղապ չիտա՞ք.

— Հա, անանկ ըսինք:

— Է՛հ, տահա ի՞նչ կուզէք կոր, ես ալ
ձեզի հոս բերի քի ուղածնուդ խտար հով
կըլէք տէյի:

ԲԱԳՈՍԱԿԱՆ

Վհայեալ գինեմոլ մը գրաւ դրաւ իր
բարեկամներէն մէկուն հետ, թէ աչքերը գոց՝
կարող է իրեն քիմքին մատուցուած ամէն տե-
սակ ըմպելիքները որոշել:

Գրաւը ընդունուելով՝ գինետուն մը դի-
մեցին, ուր գինեմոլն պայմանին համեմատ,
առանց աչքերը բանալու, սխալ անուններն
տալ ամէն խմած ըմպելիներուն, շամբանեա-
էն սկսեալ մինչև ամենէն կծու ճինը:

Գժբաղդաբար ամենէն վերջին գաւա-
թին պարունակութեան տեսակը որոշելու ի
զուր աշխատեցաւ:

— Այս ըմպելին երբէք բերանս չէի
դրած, ըսաւ և գրաւը կորսնցուց,

Գաւաթ մը մարուր ջուր էր:

Եկեղեցիին շրջակայ բնակիչներէն մին
հարցուց իր դրացւոյն.

— Դեղդիկ հանրմ, անցած կիրակի ժա-
մուն բակը երէյի մարդ ժողուըներ. ճառ կը

խօսէին կոր. դուն մեզմէ աւելի ժամուն մօտ
ըլլալուդ՝ իմացած ես ինչ ըլլալն, հալմտա մէկ
արա տեսայ որ Նշանիկդ գիրկդ առած՝ այ-
տընիւր ելեր էիր.

— Պէլի, հոն էի:

— Է՛յ ի՞նչ ըրին.

— Զուրը հալմանը դրին ծեծեցին:

ՕԳՏԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ


Քրտինք—խաշի դէմ

Ամառուան այս տաք օդերուն շատ մար-
դիկ չափէ աւելի քրտնելով քրտինք—խաշ
կըլլան. ասոր դարմանն է հետեւեալը.

1^o Օսլաի (նշաստա) փոշի քսել բըր-
տնած տեղը:

2^o Մէկ մաս ընկուզի տերեւ երկու
մաս ալ ջուր պէտք է լաւ մը եռացնել եւ
գաղջ (Ըլըգ) վիճակի մէջ քրտինք—խաշ տե-
ղը լուալ, յետոյ թեթեւ մը չորցնել եւ
վրան ցանել գետնախնձորի (բաթաթէգ) ա-
մենաբարակ փոշի. այս պարզ միջոցներով այդ
անախորժ բանին առաջը կ'առնուի: Յաջո-
ղութիւնը կատարեալ է: ԱՆԺԵԼ ԻՔ

ՆԿԱՐՀԱՆՈՒԿ ԹԻԻ 5



կ ան ը

րկ աւ վ Զ

1 ան մը

մէջ ն ա Շ



ՀՆԱՐԱԳԻՏ ՄԸ

Աւստրալիոյ Մելպուրն քաղաքին մէջ տնցածներս կը մեռնի մեծահասարակութեան գրավաճառ մը: Սա՝ երիտասարդութեանը ժամանակ քարտուղար է եղեր գրավաճառի մը որ գեղանի աղջիկ մը ունէր:

Ժամանակ մը ետքը աղջկան ու երիտասարդին մէջ սիրային յարաբերութիւնը կը սաստկանան, և ամուսնանալու համար հօրը հաւանութիւնն առնել պէտք կըլլայ:

Երիտասարդը օր մը իր բոլոր համարձակութիւնը ամփոփելով տիրոջը կը ներկայանայ և աղջիկանը ձեռքը կը խնդրէ:

Գրավաճառը չափազանց զարմանալով կըսէ.

— Տղաս, գրպանդ կուտ մը չունիս, ի՞նչպէս աղջկանս հետ պիտի ամուսնանաս:

— Ո՛հ, տէր իմ, իրաւ է որ հիմա սաակ չունիմ, բայց կրնամ շահիլ յոռաջիկային:

— Ի՞նչպէս.

— Դուք վաճառական մարդ էք, անգամ մը փորձեցէք զիս, կը տեսնէք:

— (Քիչ մը խորհելով) Շատ աղէկ, հիմակուրէն սկսինք այդ փորձին: Փափաքներս անուն վէպէն 1500 հատ մնացած է տէքսիս մէջ, մէկը չառնելու կարգար այն գիրքէն, ահա ատով փորձեցէք բազմերնիդ:

* *

Այս խօսակցութենէն երկու շաբաթ ետքը վերոյիշեալ 1500 գիրքէն հատ մը չէր մնացած. ամենքն ալ ծախուած էին բուն գինով և տակաւին կը փնտռուէր:

Գրավաճառը այս անակնկալ յաջողութեան վրայ զարմացած՝ պատճառը կը հարցնէ քարտուղարին:

Երիտասարդը — Կըսեմ, ետքը կիմանաք, — ըսելով՝ պատասխանելէ փախուստ կուտայ, և քանի մը օր անցնելէ ետքը տիրոջը կը ներկայացնէ լրագրի մը չորրորդ երեսին հետեւեալ ծանուցումը.

“Հարուստ և գեղեցիկ երիտասարդ մը կը փափաքի ամուսնանալ. իրեն հետ ամուսնանալիք օրիորդէն չի պահանջեր գեղեցկութիւն և հարստութիւն, այլ միմիայն բարեկամութիւն: Փափաքողը կը հրաւիրուի խտեսակցութիւն, ժամը 3էն մինչև 4, այսինչ փողոցն, այն ինչ թիւ տունը, պայմանաւ որ ձեռքն ունենայ Փափաքներս անուն վէպն”:

Գրավաճառը հիանալով քարտուղարին հնարագիտութեանը վրայ, որով հպարտաւոր գիրքեր ծախուեցան շատ քիչ ժամանակի մէջ, աղջկանը հետ կ'ամուսնացնէ զայն, անոր յանձնելով նաեւ իր 40 հազար ոսկիի հարստութեան վարչութիւնն և ինքը գործէքաշուելով կը հանգստանայ:

Ահա այս քարտուղարն է Էտվար Պըլունդ անուն, որ մօտերս մեռած է 2 միլեօն լիւրայի չափ հարստութիւն մը թողով, 32 տարի ետքը:

Թարգմ.

Լ Ա Ռ Օ Զ



ԱՂԱԽԵԻ ԲԱԲԱԶԵԱՆ

ՄՕՏԻՍՓ

— 0 —

Վառնա, Բարուշէվա Գողոց, թիւ 1338

Այս անգամ Կ. Պոլսէ հոս փոխադրուած և մեզ ճանչցող Աղնուհի Յաճախորդուհեաց առաջարկութեամբը վերոյիշեալ խանութը վարձած ըլլալով՝ ուր ամէն եղանակի յատուկ Բարիդի վերջին նորաձեւութեանց ՄօՏԵՆԻՐԸ պիտի գտնուին, պատրաստ ենք ամենանուրբ և ձեւաւոր շրջագիտներ ձեւել ու կարել:

Մեզ ձանձրողները արդէն համոզուած են թէ ամէն կերպով կը գոհացնենք զիրենք. մենք նոր սկսնակներու ձեռքով կարել չենք տար մեզ յանձնարարուած գործերը, այլ մեր իսկ ձեռքովը կը կարենք: Այցելութիւն մը բաւական է մեր այս ըսածը հաստատելու: Գիտենք ալ անմիջեւ կերպով չափաւոր են:



Երկու դրացի տիկնայք

Ա՛խ, Հոռոյի հանքմ, ի՞նչ մեղքս պահեմ, կարգուած ատենս անխտար սէր ունէի վրան քի՛ (ամուսինը կ'ակնարկէ) սա՛ ուտե՛լըս կուգար:

— Է՛յ հիմա՞...:

— Հիմա՞, սուս եղիր, բիւշման եղած եմ քի չեմ կերած:

Ի վիճակ ճաշարանի մը մէջ

— կարս'օն.

— Ի՞նչ կը հրամայէք պարոն:

— Աս կերած պրծօլաս անցած կիրակի օրուան կերածիս պէս համով չէ.

— Ո՞վ ըսաւ, անոր մէկ կտորն է, աս կէց զատ՝ գալ կիրակի օրուան համար ալ կտոր մը աւելցաւ:

Միւսիւ վիկթու, սաաթընա պագսանա.

— Բառտօն մօն շէ՛, սաաթըմ իշլէմէ-եօր:

— Սէպէ՞պ.

— Ագշամ Բանագօտա գաֆայը գուր-տուգ տէ, սաաթը գուրմայա ունութտուգ:

— Տէսէ՞նէ, սապահտան պէրի օնուն ի-չիւն տէլի տօլու սէյլէնիեօրսըն:

— Այրպլամա մօն ամի, կիւնահըմը-զը էվէլտէն տէտիք, վէ նասըլ քի պազը ա-հարը պօզուլմուշ սաաթ 13—17 վուրուր, էօյլէ տէ գուրուլու գաֆա տէլի տօլու սէյ-լէմէյէ մէճպուր օլուր:



ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 13

Ճերմակ դաշտիկ

Սեւ սեւ հունտիկ.

Ձեռքով ցանէ,

Լեզուով հնձէ:

Թիւ 14

Բոլոր աշխարհը զարմացաւ

Թէ արու մը էգ ծնաւ:

Թիւ 12 հանելուկն էր ԽԻՂՃ:

Լուծումն Բառական հանելուկի

Լ	Ա	Հ	Է
Ա	Ն	Ա	Մ
Հ	Ա	Լ	Է
Է	Մ	Է	Ն

Լուծեց Տեար Գ. Գալուստեան. որուն կառաջարկենք իր հասցէն մեզի իմացնել, որ պէս զի նուէրը զրկենք:

ԵՐԵՔ ՊԵՏԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴ



Ժողովուրդը — Խիռքիսն ունիմ, ո՞վ կառնէ .

Պետերը (իրարու վրայ նետելով) — Ես չեմ առնեմ ա՛յն կառնէ . . .

ԱԶԴ

100 Այցաբարտը երկու ֆրանքի կը տպագրուի: Դիմել «Հայելի»ի խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեանց թղթատարի ծախք 30 սանդիմ յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամակադրոշմ կ'ընդունուի:

ՏՕՔԹ. Ե. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերագարձած է Սօֆիան եւ կընդունի հիւանդներ ամեն օր իր տունը ի Պալլադ Բազար, առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5: Զորեշարթի օրերը կէս օրէն վերջը ժամը 2էն 5 ձրիապէս կը դարձանէ:

6—10

ԿԱՂՎԱՆԻՍ Թ

ՕՆՆԻԿ ՔՈՆԲԱՏԵԱՆ

Ամեն տեսակ տպագրական կաղապարներ պատրաստող, նաեւ թէ անձնական եւ թէ առևտրական կնիքներ: Դիմել ի վարձա 2Իլինկիրէր փողոց թիւ 561:

Գին գոհացուցիչ:

5—12

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒԹԵՔ

Ռուսձուգ	Տիարը Եղարբ Սարաֆեան:
Միլիտարէ	Տիար Արթուր Սարգսեան:
Հսւմլա	Յովհաննէս Մաճարեան:
Սօֆիա	Յակոբ Ծերունեան:
Լոնտոն	Հայկ Աստուածատուր:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ.
Печатница „Взаимность“ — Варна